

րեաց, մանաւանդ առաւելագոյն չարաթունին Միհրներսեհի: 9 Եւ էր պատճառ շնորհակալութեան յամենեցունց մտաց այս, եթէ «Ամենայն թագաւորք, որ յառաջ քան զձեզ էին ի գահուդ յայդմ, ձեր նախնիքն՝ սիրէին զմեզ, հոգալով զմեր շինութիւնս եւ զաւգուտս մարմնաւորս. բայց դուք առաւել ցուցիք¹ զսերն որ էր առ մեզ, զի գլաւիտենական կենդանութիւնն մեր զմտաւ ածիք² ծանուցանել մեզ եւ պարգեւել: 10 Եւ եթէ նախնեացն քոց ծառայեցաք յամենայն յաւժարութեամբ եւ կամաւ յամենայն պէտս, յոր եւ հրամայէին մեզ. իսկ քեզ՝ ամենայն անձին պարտ է ոչ իբրեւ զմի անձն սպասս մատուցանել, այլ որպէս զբազում անձիս զմի անձն առնել եւ անձանձորոյթ հպատակել զցայգ եւ զցերեկ աւգտախնդիր թագաւորութեանդ. քանզի յաղագս գիւտի միտորեալ ոգւոյս մերոյ փութալ հոգացար³»:

11 Եւ սոքա իւրաքանչիւր անձին այսպիսի ինչ եւ եւս առաւել, ըստ իւրաքանչիւր կարի, ասացեալ գովութիւնս՝ լռեալ դադարէին: 12 Իսկ սպարապետն Զայոց Վարդան տերն Մամիկոնէից կարգեալ զիւրն զառանց պատճառանաց զանսուտ բանս եւ զլինելոց իրս, որպէս ի դէմս գովութեան թագաւորին եւ ամենայն բազմութեան աւագանւոյն Արեաց՝ ասէր այսպէս, թէ «Զիմոց⁴ զնախնեացն զհպատակութիւն եւ զվաստակ, զոր յայս դուրս եւ առ ձեր թագաւորութիւնդ արարեալ է, ի ժամանակէ յորմէ հետէ կարգեալ եմք ի ձեր ծառայութիւնդ՝ դուք ամենեքեան քաջագոյն գիտէք, եւ ինձ ոչ է պիտոյ յաղագս այդպիսի իրաց մի ըստ միոջէ տեղեկացուցանել զձեզ⁵, զոր ստուգագոյն առաւել ճանաչէք քան զիս: 13 Իսկ թեպէտ եւ շատ նուազ եմ քան զիմ նախնիսն՝ սակայն որչափ կարն էր յիս՝ եղեալ էր ի մտի արդար վաստակաւք հաճել զմիտս ձեր. եւ ուր հասեալ էի ի գործ ի ձեր հրամանէ՝ տեսեալ էր զաւրագլխաց ձերոց եւ իմ ընկերաց ըստ իմ ուժոյ միամտութեամբ զիմ զգործն եւ զվաստակն: 14 Բայց արդ յայսմ հետէ այսպէս կամք են, ջաւնամ, զի թէ ցայժմ գործեալ ինչ իցէ, եւ ոչ արժանի անուան կամ գովութեան՝ յայսմ հետէ հնարիմ⁶ ամենայն զաւրութեամբ եւ ուժով, աւգնականութեամբն Աստուծոյ, գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ եւ ի կայսեր դրանն եւ յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչեւ ցլաւիտեան»:

1 Ձ. ցուցէք

2 Ձ. ածէք

3 ՏՏ. փութով հոգացար

4 Ձ. զիմոյ

5 Ձ. ձեզ

6 Ձ. յայսմ հնարիմ